մեզ ասելով՝ մաղ մի գլխոյ նորայ սպիտակ և թուխ ոչ կարես առնել, ուրեմն եթէ վասն մաղի միոյ սպիտակ և թուխ առնելոյ ոչ կարէ, ուրեմն զի՞ արդ կարող լինիցի Տէր և թագաւոր և իշխան 'ի վերայ նոցա լինիլ, որում ամենայն իրօք նմանի անթերի, և անպակաս իբրև զինքն և ամենայն ժողովուրդք ինքնակալ թագաւորի բարբարոսի ոչ մնայ ազատ ընդ բանական բնութիւնս իւր, եթէ ոչ ամենեքեան անօրինեցեալ և անցանելով ըստ պատուիրանի Տեառն (միենոյն գունակ որպէս նախնին մեր Ադամ անկանելով 'ի փառաց ազատութենէ իւրեանց լծորդի 'ի վաստակս ծառայութեան՝ հաւասարելով անասնոց անբանից և նմանելով նոցայ). նա՛ և ամենայն թագաւոր ինքնակալ և ինքնակամ բարբառոսաբար արարմամբ թագաւորութեամբ, նախ ինքն զինքն ետ 'ի ներքոյ լծի ծառայութեան, որ հաւանեցաւ ընդ միտս իւր յաւելորդապէս զօրութիւնս քանթէ այն, որ ստացաւ նա 'ի Տեառնէ արարչէ իւրմէ, քան զի նա՛ ոչ գտաւ զինքն յաւելի զօրութիւն յիշխանութեան քանթէ 'ի պաշտօնս հովուի միոյ պարզամտի որում իշխէ 'ի վերայ խաշանս իւրոց իբր բնական կենդանեաց, այլ ոչ ինքն ծանեաւ գործ պաշտօնին իւրոյ և ոչ ժողովուրդ պատիւս ազատութեան իւրեանց, որպէս տեսանեմք աչօք որ թագաւորս այս Շարժի բնական բնութեամբ այսինքն սիրելով, ատե-